



պէս նաեւ Կողքիսը: Տեսնելով որ երկրէն շատ օգուտ կար իրեն՝ շինել տուաւ 75 բերդեր, իւր դանձուց մեծ մասին իրր դանձապահիկներ («տունս դանձուց»): Ասոնց կարեւորագոյններէն մին Մեծ Հայոց սահմանին վրան էր: Միհրդատ գլխէր թէ իրեն անթիւ զիւրութիւններ կ'ընծայէր Պարխարայ ջրաւէտ եւ անտառաշատ դօտին. ուստի մանաւանդ հոն ընտրեց իւր դանձուց-բերդերը: Պոնտոսի թագաւորութեան այս վերջին ծայրն ալ ապաստանեցաւ՝ երբ Պոմպէոս արագ արագ յաղթութեամբ կը յառաջանար: Եւ կենալով յԵկեղեաց՝ Դաստիրայի մօտ, ոչ շատ հեռու Եփրատէն՝ որ յայտնի է թէ Եկեղեացը Փոքր-Հայքէն կը բաժնէ, ջրարբի լեռ մը բռնեց եւ հոն մնաց. մինչեւ որ վախնալով թէ հոն կը պաշարուի՝ միտքը դրաւ Պարխարէն անցնիլ եւ Կողքիս մտնել եւ անկից՝ ի Բոսփորոս: Նոյն տեղւոյ մօտ՝ բայց Փոքր-Հայոց մէջ՝ շինեց Պոմպէոս Նիկեպոլիս քաղաքը, որ այսօր ալ կայ եւ շատ բազմամարդ է: Բազմաթիւ իշխանաց՝ որոնք Հռոմայեցւոց հաւանութեամբ տիրեցին Փոքր-Հայոց, վերջինն (— Ստրաբոնի օրով —) եղաւ Արքեղայոս: Իսկ հաղտեաց երկրէն մինչեւ Կողքիս կ'իշխէ այժմ Պիւքոպոլիս, իմաստուն եւ կառավարելու վարժ կին մը: Ասի երկու ուսոր եւ դուստր մ'ունեցաւ: Ուստրներէն մին քիչ մը յառաջ Մեծաց-Հայոց թագաւոր դրուեցաւ (— Զենոն՝ 18ին Յ. Ք. —) Պիւթոզորիս ամուսնացաւ Արքեղայոսի հետ, եւ մինչեւ անոր մահը միասին ըլլալէն ետքն՝ այժմ այրի է եւ տէր այն աշխարհաց՝ զորոնք արդէն յիշեցինք: Խաղտեաց մասին ալ վերաբերեալն ըսենք: Ասոնց երկրէն կ'անցնի Պարխար: Լեռանց մէջ բնակող ցեղերը վայրենի են: Յեղեր կան՝ որոնց բնակութիւնը ծառերու գլուխն է կամ փայտակերտ աշտարակներու տանիքը՝ որ մոսիսի կը կոչուի որմէ Մոսիսիէ կ'անունը՝ զոր ասոնց տուած են հինք<sup>12</sup>: Այս ամէն բարբարոսներն ուտելու ուրիշ բան չունին՝ բայց եթէ երէց միս եւ ծառերէն թափած վայրի կաղին: Հնարք մ'ալ ունին ուղեւորաց վրայ յարձակելու՝ խոյանալով իրենց աշտարակաց բարձունքէն: Կը պատմուի թէ Եփեսոսեանք Պոմպէի գօրաց երեք գունդը սատակեցին՝ երբ կ'անցնէին Մոսքեկեան գօտիէն: Հռոմայեցւոց գօրաց ճամբու անցքին վրայ դրած

<sup>12</sup> Խաղտեք եւ այս Մոսիսիէ կ'է տէր էին՝ ինչպէս կ'ըսէ Ստրաբոն, նաեւ Կարնոյ եւ Դերջանի՝ երբ առին Հայք:

էին ամաններ լեցուած ըմպելիքով, որուն խառնած էին այլեւայլ ծառերու ոստերէն ծորած թմբրեցուցիչ մեղր մը. եւ յետոյ կը սպասէին իրաց վախճանին: Երբ տեսան թէ Հռոմէացւոց զօրքը զինովցած թմբած էր՝ հասան ու կոտորեցին զանոնք ըստ կամս: Նոյնպիսի են նաեւ այժմու Խաղտիք՝ որոնք ամէն ցեղերէ աւելի մօտ են ի Փառնակիս եւ հին ատեն Քաղիւք կը կոչուէին» եւն:

Գիտենք որ Ստրաբոնի այս նկարագրութիւնը քիչ մը խիստ է, եւ թէ այլեւայլ իրողութեանց ուրիշ մեկնութիւն կու տան արդի զիտնականք: Մեր նպատակը չէր արդէն այս կէտերը եւ այն ազգաց ինդիւրները պարտել: Այլ միայն քիչ շատ ցուցնել թէ ինչպիսի մասեր ունէր ընդարձակ Փոքր-Հայքը, եւ ինչ ազգեր պէտք էին Հայք հայացնել ինչպէս Մեծ-Հայոց յիշեալ դաւառներուն, նոյնպէս Փոքր-Հայոց մէջ: Փոքր-Հայք չէին իսկ կրնար շատ մեծ ազդեցութիւն ընել ամբողջ այս ծովեզերեաց վրայ, նոյն իսկ անով որ քիչ ժամանակ իրենց ձեռք մնաց, եւ իրենք իսկ նախ պոնտական եւ յետոյ հռոմէական եղան: Անոր համար այս շրջանին մէջ՝ ինչպէս ամբողջ ծովեզերքը՝ կը նստին՝ ինչպէս Հերոդոտու եւ Քսենոփոնի օրով՝ նոյնպէս Ստրաբոնի օրով (ԺԱ., 14, 5 եւն) ազգերու կամ ցեղերու բազմութիւն մը, Տիրարեւացիք, Խաղտիք, Սաննացիք, Ապոլայիտք (սերունդք հին Կերկեոաց՝ Փառնակիոյ մօտերը) եւն, բայց նաեւ Հայք՝ ո՛չ միայն իրենց մնացած պարխարեան բաժնին մէջ, այլ նաեւ միւս կողմերը, գաղթականք եւ խառնուրդք («Հայաքաղիւք»՝ Պղին., 2., 4 եւն): Ստրաբոնի նկարագրած այս իրական Փոքր-Հայքն է նաեւ Պտղոմեայ նկարագրածը (Ե., 6 եւն), զոր յիշեցինք, իւր հինգ նահանգներով, եւ ասոնք հաւանօրէն ո՛չ միայն Միհրդատի օրերը կային, այլ հաւանօրէն աւելի հին են: Դժբախտութիւն է որ այս Փոքր-Հայք տակաւին չէ քննուած լիովին, եւ ո՛չ միայն այս դաւառաց ճիշտ սահմանները տակաւին խնդրական են, այլ նաեւ յիշուած բազմաթիւ տեղերուն մեծ մաս մը գեռ վերջնականապէս չէ ճշգրտուած: Այսպէս առնունք միայն Սատաղայի եւ մնացեալ Պոնտոսի միջեւ եղած սահմանագիծը: Կիւմոն, որ կը նկարագրէ այս գիծը («Պոնտ. Ուսումն.», Բ., § 33) կը յայտարարէ թէ մինչեւ արդի Կէօսէ կը հասնին իւր չափմունքը, հետեւաբար իւր քարդն ալ (Տիտ. ԻՁ) ճիշդ է մինչեւ հոն: Ինքն ալ կ'ընդունի՝ Կիբերտի

53/66

հետ՝ թէ այս Կէօսէն ըլլալու է հին Դոմանա, կամ՝ քանի որ դեռ չէ ճշգրտուած՝ կրնայ ըլլալ: Ասոր եւ Պոնտոսի մէջ սահմանատեղին էր Սեղիսա, «ճագ Պոնտոսի», Դոմանայէ ԻԴ մղոն հեռու: Այս Սեղիսան ուրեմն անհրաժեշտօրէն ըլլալու է, կ'ըսէ, արդի Թէքքէ տեղը, այս գծով՝ Փիլասմեաէ քիչ մ'ետքն, ուր Կարնոյ արդի ճամբան կը հասնի արդի Կիւմիւշխանէի-Չուրը եւ քիչ մ'ետքն անցնելով Թէքքէն՝ կը մտնէ Կիւմիւշխանէ, Բիւզանդեանց Արդիւրոպոլիսը: Եթէ ճիշդ են Դոմանայի եւ Սեղիսայի այս նոյնացմունքը՝ ի հարկէ «կը հետեւի թէ (Փոքր-Հայոց եւ Պոնտոսի) սահմանադիւրը կը նշանակուէր Խարշուտի վերին ընթացքով»: Ասի բերինք իր օրինակ՝ սահմանաց միւս մասերն ալ տակաւին շատ տեղ ճշգրտման պէտք ունին: Ուստի Փոքր-Հայք իրր աշխարհ, — քանի որ այն ծովեզերեայն աւելի կարճ աշխարհակալութիւն մ'եղաւ, — նոյն մնացած է, եւ՝ բաց ի այն պարխարեան-խաղտեան մասէն՝ անջատ այս ծովեզերեայէն: Հռոմայեցիք Միհրդատէ առին այս երկիրները, եւ որչափ ալ մանր իշխանաց բաժնեցին՝ պէսպէս բաժիններով ըստ պարապայից, մինչեւ ամէնուն նահանգ ըլլալը, ամբողջ ծովեզերքը քիչ շատ միասին դտնուած է կանուխէն: Եթէ անասնք Եւտրոպիոսի (Դ., 14) — ուշ ժամանակի՝ Դ. դարու համառօտագրող մը — արդէն Պոմպէոս — որ կը հիմնէր իւր «Պոնտական եպարքի» — Դիոդորոս արքայի՝ Գաղատիոյ չորրորդապետի՝ ի վարձ իւր ծառայութեանց՝ տուած ըլլայ նաեւ Պոնտոսի թագաւորութեան արեւելեան կէսը, քաղաքներովս Փառնակիս եւ Տրապիզոն, Պոնտական Հայքն, մինչեւ ի Կողքիս ու ի Մեծ Հայոց, եւ անոր համար առաւ նաեւ Փոքր-Հայոց թագաւորի տիրոջը: Միւս կողմանէ զիտենք որ ո՛չ միայն յիշեալ Պոմպէեան «Պոնտական եպարքի» վերաբերող կրկին շրջաններս՝ Նէպոլիտոյ (= Նէոկղաւդիոպոլիս, արդի՝ Վէզիր-քէօիլիւ) եւ Պոմպէոպոլիտոյ (արդի՝ Թաշ-քէօիլիւ) առնուած էին հռոմէական պետութեան մէջ իրր նահանգ (63ին Ն. Ք.), այլ նաեւ այն աշխարհամասերն՝ որոնք Գաղատական եւ Պողեմոնական Պոնտոս կոչուեցան, ուստի յատկապէս նաեւ Ամասիա — Մեղալոպոլիս (Սեբաստիա) գիծը: Հռոմայեցիք չուտով հասկընալով թէ այս երկիրները տհաս են տակաւին՝ հռոմէական օրինաց ենթարկուելու, կրկին մանրապետութեանց յանձնեցին՝ մինչեւ հռոմէանան, եւ ինչպէս

նորանոր փոփոխութիւններ ըրին պափղազոնեան-գաղատական եւ յարակից պոնտական մասերուն մէջ՝ յատկապէս Դիոդորի մահուանէ ետքը (40 Ն. Ք.), նոյնպէս՝ նոյն իսկ Փառնակի ձեռնարկէն ետքը՝ թողուցին եւ հաստատեցին Պողեմոնեան հարստութիւնը: Եւ ասով աւելի որոշ ձեւ առաւ Պողեմոնական Պոնտոսը, որ բնական է կը պարունակէր Կողքիենէն, եւ դարձեալ յիշեալ նախկին փոքրսայական աշխարհակալեալ ծովեզերեայն եւ դարձեալ շարունակութիւնը մինչեւ Փասիս: Որչափ ալ բուն Փոքր-Հայք ալ յետոյ տրուած ըլլայ գամրական եւ պողեմոնական տանց անդամոց՝ երբեք խառնակած չէ՛ ասի ո՛չ Գամրաց եւ ո՛չ սահմանակից Պողեմոնական Պոնտոսի հետ: Նոյն իսկ հռոմէական նահանգի վերածուիլն անջատ եղաւ: Միւսներէն շատ ուշ բաւական հռոմէացած նկատուեցան Պողեմոնական եւ Գամրական Պոնտոսները եւ նահանգ եղան (63ին Ն. Ք.) բայց Փոքր-Հայք, փոքր մասէ մը դատ, իրր ամբողջութիւն աւելի ուշ նահանգի վերածուեցաւ (69/70 Յ. Ք.): Մեր նպատակէն եւ զձէն դուրս է այն՝ որ Հռոմէացիք Պողեմոնականը նահանգ ընելով՝ իրր Տրապիզոնի արեւելակողմէն մինչեւ Փասիսի բերանը փոքր մանրապետութիւն մը ստեղծեցին, եւ այստեղ կ'ելլէ յետոյ Լազիկէ մը՝ իւր ժամանակին կարեւոր դիրքով մը հռոմ-պարսիկ յարաբերութեանց մէջ: Իրր հռոմէական նահանգ՝ Կապադովկիոյ վերաբերելով ալ՝ Փոքր-Հայք ուրոյն դիրք ունէր՝ իւր աշխարհատիրոջով եւ Նիկոպոլիս մայրաքաղաքով, հանդէպ «Պոնտոսի», որուն կը վերաբերէին Գաղատականն ու Պողեմոնականն՝ Նէոկեասարիս մայրաքաղաքով: Դիոկղեսեան-Կոստանդինեան շրջանին հիմն ի վեր կը փոխուին նահանգային վարչութիւնքն ու իրենց սահմանները: Փոքր-Հայք կը մտնէ այս շրջանի հռոմէական նորաստեղծ «Հայք» նահանգի մէջ, որ կը պարունակէ մանաւանդ գամրական ընդարձակ աշխարհամասեր, բայց նաեւ պոնտական, կենդրոն ունենալով Մելիտոնէ: Այս ժամանակէն կը սկսի Պողեմոնականին ամբողջ ծովեզերաց բաժնուիլը՝ հարաւակողմէն, ուստի եւ պողեմոնական Կողքիենէն եւ գաղատականէն մաս մը կը մտնեն այս «Հայոց» մէջ. եւ նոյնպէս կը մնայ Թէոդոսի բաժանմամբ՝ երկու «Հայք» ելլելով (Ա.—Բ): Երկար ժամանակ յիշեալ ծովեզերքն (Կերասոն-Տրապիզոն) Փոքր-Հայքէ անջատ մնալէն ետքը՝ Յուստինուս օրով նորէն կը սկսի



վարչապետ միանալ՝ ահամայ վերյուշում մը շատ հին եւ կարճ վիճակի մը: Փոքր-Հայք կ'անցնի Բարձր-Հայոց հետ կազմելու Յուստինիանու «Ա» Հայքը, եւ ասոր մէջ կը մտնէ նաեւ ծովեզերքը (որ սակայն՝ իբր աշխարհ՝ միշտ կը կրէ Պողոթնական անունը), եւ նոյնպէս կը մնայ Մալթայի բաժանման ատեն ալ: Այս միջոցին — երբ նաեւ իրական Փոքր-Հայք անջատ էր — կրկին կը շարունակեն մնացեալ գամրական (Մելիտենէ-Կոկիսոն) պոնտական (Սերաստիա-Կոմանա եւն) բաժիններն իրենց «Հայք» կամ «Արմենիա» պաշտօնական յորջորջանքը, Յուստինիանո՝ Բ. եւ Գ., Մալթիկեան Բ. եւ Ա. բաժանմամբ: Յաջորդ՝ բանակաթեմերու շրջանին՝ կրկին անջատ են ծովեզերքն ու Փոքր-Հայք: Մեծածաւալ «Արմենիական» բանակի, որ կը պարունակէր (Բ. Գամրաց եւ Ալիս-Վերինոպոլիս գծի բացառութեամբ) ամբողջ Գամիրքն ու Պոնտոսը՝ մինչեւ Սինոպ, բաժնուելու ատեն նախկին սահմանակոմսութիւնը «Սաղտիք» անկախ բանակաթեմ կ'ըլլայ: Բայց զարմանալի բաժանմամբ պարունակելով ամբողջ պողոթնական ծովեզերքն մինչեւ Փասիս, իրմէ դուրս կը մնայ նոյն իսկ Նէոկեսարիա, թո՛ղ միւս մասերն ու Փոքր-Հայքը անդին՝ անոր մէջն են Բարձր-Հայոց մասեր, գոնէ Եկեղեց-Սպեր: Ամէնէն հետաքրքրականն է Լեւոն Զ. ի եւ Կոստ. Ծիրանածնի, ուստի Ժ. դարու շրջանը մանր բանակաթեմերու: Անկախ թեմ կը կազմեն «Սերաստիա» (ԺԱ.) եւ «Կոզոնիա» (Ժ.): Վերջինս՝ իւր այս նշանաւոր բերդաքաղաքով, որ արդէն երկար ատեն կենդանի էր «Արմենիականի», հապէս բուն Փոքր-Հայքն է, եւ Ծիրանածնի՝ Ստրարոնէ ինն դար ետքը՝ տարրեր չի նկարագրեր Փոքր-Հայքը «սկսելով (բացառաբար) Նէոկեսարիա քաղաքէն եւ Փաղաղրոս լեռնէն» մինչեւ «Նիկոպոլիս եւ Տեփրիկէ» (փաղառաբար): Այս «Կոզոնիա»-Փոքր-Հայքի քով է՝ նոյնպէս ուրոյն՝ «Սերաստիա» թեմը:

Կարծենք սպացուցինք թէ Փոքր-Հայք յորջորջանքը՝ իբր պետութիւն, իբր պոնտական, իբր հոռոմէական եւ բիւզանդեան՝ ա՛յս չափ դարերու մէջ շատ որոշ իմաստ մ'ունի, եւ իբր աշխարհ՝ իւր վերջնական կազմութենէն ետքը մնացած է նոյն գծերով ու նոյն անուամբ՝ այնչափ դարեր, որչափ ալ վարչապետ կապուած ու անջատուած ըլլայ շրջակայ աշխարհաց հետ: Հետեւաբար Փոքր-Հայք անունը սեպհական է այս աշխարհին,

զոր նոյնպէս դիտեն՝ ինչպէս հին պատմագիրք եւ աշխարհագիրք, նոյնպէս նորերը՝ որոնք խնամով ուսումնասիրած են այս իրերը: Նոյնպէս կը գծեն ամէն քարտիսագիրք, եւ որչափ ալ սահմանաց մանր տարրերութիւնը գտնուին՝ ընդհանուրը նոյն է: Այսպէս ըստ Կիւպերտի՝ Armenia Minor Եփրատով Հայաստանէ բաժնուած կը հասնի՝ մինչ Արածանույ խոնուրդէն քիչ մը վարը, սահմանագիծն ըլլալով Դասկուսայի եւ Կիա-կայի միջեւ, որմէ ետքը կը բաժնուի Մելե-տենույ շրջանէն դեռ մը որ կը հասնի Տոնոսայի մօտերը եւ աղեղնածեւ մը կազմելով, եւ այնուհետեւ հիւսիս-արեւելեան ուղղութեամբ կը հետեւի լեռնազծին (Scordises լեռինք), քիչ շատ զուգահեռական նաեւ Աղիւսի՝ որ Փոքր-Հայքէ բղխելով՝ կ'անցնի Կոզոնիէ եւ հարաւ-արեւմտեան ուղղութեամբ կը հոսի, եւ զուգընթաց նաեւ Կոզոնիէն մէջ մնացող Սերաստիա-Կամիսա-Չարա գծին, որմէ ետքը դէպ ի հիւսիս կը ձգի Պարիսարեան շրջանին մէջ (— Կիւպերտ եւ նաեւ այլք վերջնական Փոքր-Հայքը այստեղ չեն հասցըներ շիտակ մինչեւ Մելանթիոս, այլ սահմանագիծն աւելի դէպ ի արեւելք կը գծեն —) եւ այն Պարիսարեան-Սաղտեան սահմանով բաժնուած վերոյիշեալ ծովեզերեայէն՝ կը հասնի մինչեւ Բարձր-Հայոց սահմանները, որ Փոքր-Հայոց այսներս մտած ծագին թէ՛ արեւելեան եւ թէ՛ հարաւային սահմանը կը կազմեն «մինչեւ ցղոյն դարձուած Եփրատայ ի հարաւոյս»<sup>13</sup>:

Այս է իրական եւ պատմական Փոքր-Հայքը, ինչպէս կ'երեւայ իբր իւր զարգացման արդիւնք: Ուստի այս ամբողջ դարերու ընթացքին մէջ «Փոքր-Հայք» յորջորջանքն ուրիշ իմաստով մը՝ միշտ անյատուկ է, եւ խորշիւի է գործածութիւնն՝ ուր պատմական անձրութիւն եւ շիտակութիւն կրնայ պատճառել, ո՛չ նուազ այն Հոռոմէական «Արմէնիա»ներու աւելի եւս լիովին այլազգ «Արմէնիական» շրջանին եւ անոնց հանդէպ, որոնք վարչական բաժանմունք էին՝ ո՛չ աշխարհագրական եւ ազգագրական միութիւններ: Չգիտենք ինչո՞ւ պիտի չպահուին ատենց համար իրենց ժամանակի յորջորջանքները, եւ յամենայն դէպս եթէ «Փոքր-Հայք» պիտի գործածուի այս իմաստներով՝ գոնէ որեւէ որակմամբ ըլլալու է որ մթազնու-

<sup>13</sup> Գ. Վարդանեանի «Քարտէս հին Հայաստանի», 1911, չենք տեսած՝ ստուգելու թէ ինչպէս գծուած են հոն սահմանները:

թեան հետ՝ պատմական թիւը ըմբռնաց առիթ չըլլայ այն դարերուն համար: Չքմեղութիւն մը չէ ըստ ինքեան թէ նաեւ եւրոպական դիտուէք յաճախ նոյնպիսի ընդհանուր բացատրութիւն մը կը գործածեն: Որոնք զիրն ո՛չ ընդհանուր որեւէ բացատրութեան մը վրայ է, եւ ո՛չ այս կամ այն յորջորջանքն ընտրելու, այլ պատմական ճշգրտութեան վրայ: Բայ աստի տարրեր բան է խնդրոյ մը մանրամասն ուսումնասիրութեամբ տարրեր եղբակացութեան հասնիլը եւ տարրեր՝ նաեւ հմտալից մատենագրի մը քով այս կամ ընդհանուր ըմբռնում մը գտնել: Թողունք որ գիտնոց մաս մը, յատկապէս հին հայագէտք եւ անոնց աղբեցութեամբ ուրիշներ՝ մեծապէս ազդուած են իրենց ժամանակի հայ բանասիրութեան ըմբռնումէն եւ ո՛չ նուազ Սորենացույ մտտենէն: Սէն-Մարգէն օրինակի համար (Mémoires, I—II, ինչպէս յիշեցինք) լիովին այս աղբեցութեան ներքեւ է, նոյնպէս աւելի կամ նուազ՝ Լանդլուայ եւ այլք: Սակայն աբելորդ է այս իրերու վրայ ծանրանալ:

Աւելի պէտք է խօսք մ'ըսել ի վերջոյ այս Փոքր-Հայքի եւ բուն Հայաստանի աղբերսի մասին, այն մտօք թէ ասոնք լաւագոյն օրինակն են այն տեսակիտին թէ ազդի մը վերջին եւ հակառակն այն շրջանով կամ սահմանագծերով, որուն կրցած է վերջնականապէս իւր անունը տալ, յաճախ դանազանելու է իւր միւս ազգագրական նիստերէն, մանաւանդ զաղբեցութեան: Երկու զաղափարներն՝ որչափ ալ սերտ առնչութիւն ունենան՝ բոլորովին համազօր չեն եւ չեն կրնար ըլլալ յաճախ: Հայաստանէ դուրս եւ անոր քով ուստի կրնային անկախօրէն ելլել «Փոքր-Հայք» եւ ելած են ուրիշներ ալ՝ թէեւ չկրնէ շրջանին: Ուրիշներու քով նման սկսուած զարգացում մ'ընդհատուած է՝ պարագայից բերմամբ: Այսպէս դուր չէ՝ ինչպէս արդէն յիշեցինք՝ թէ Բուզանդ Պապայ բերան կը դնէ թէ «եւ զՈւոհա քաղաք շինեալ է նախնեաց մերոց» (Բուզ., Բ., լր): Ուոհայաստանի («Ուրոյնէն») պատմութիւնը պրպտել մեր նպատակը չէ. բայց այն մանրապետութեան հաստատութեան եւ պահպանման ո՛չ նուազ գործակցած են Հայք, որոնք նաեւ նուազ թիւ մը չէին կազմեր, ինչպէս բնական էր արդէն իրաց վիճակէն եւ ինչպէս կը կրկնեն նաեւ ասորի պատմիչք այս նշանաւոր քաղաքին՝ որ ասորի գրականութեան գլխա-

ւոր որորաններէն եղաւ: Հոս Փոքր-Հայոց նման սկսուած զարգացումը կանգ առաւ՝ թէեւ միջոց մը Հայաստանի ալ վերաբերէր (— նոյնպէս Միւզոտոնիա՝ Մծբնով, որ շատ աւելի երկար Հայաստանի վերաբերած է —) անով որ Հայք չկարենալով պահել այս երկիրներն՝ իրենց գաղթականութեանց ալ նուազ յարմար կրնային տեսնել այս երկիրներն՝ որոնք դարերով Հոռոմայեցուց եւ Պարթեւաց ու Պարսից մէջ կուուոյ նիւթ ըլլալէն ետքն՝ կանուխէն արաբական եղան եւ մնացին դարերով: Ասորի տարրն էր որ արդէն շատ կանուխէն կը նստէր հոն, աւելի տարածուեցաւ նաեւ դէպի հիւսիս: Մանաւանդ արաբական շրջանին հետզհետէ մայր երկիրը գատարկացնող գաղթականութիւնը այլեւայլ ուղղութեամբ ալ շարժելով՝ դէպ ի հարաւ գոյգն միայն եղած են: Բայց այն ատեն որ այս գաղթականութիւնը նոր կեանք կը ներշնչէն Եփրատայ արեւմտակողմը, ո՛չ միայն Փոքր-Հայոց հոռոմացած տկար հայութեան, այլ՝ մանաւանդ Ժ. եւ աւելի ԺԱ. դարուն՝ կ'ողողեն ամբողջ այն արեւմտակողմը, ուրիշ հոսանք մը միշտ ձգտած դէպ ի հիւսիս-արեւելք: Օրինակի համար գրեթէ մեր պատմագրաց աչքին տակ ո՛չ միայն Հայաստանէ դուրս՝ թէեւ սահմանակից, այլ նաեւ բոլորովին ոչ-հայ աշխարհ մը՝ Աղուանք, հետզհետէ կը հայանայ իրապէս, ինչպէս կը ցուցնէ այս երկիրն ամբողջ պատմութիւնը՝ նաեւ Սելճուկեան տիրապետութենէ ետքը, որով սակայն այս ամբողջ շարժումը կ'աւարտի անով որ բնիկ աղուան տարրը կ'անհետանայ՝ մասամբ հայացած եւ մասամբ սելճուկացած: Նաեւ Ուուոյ բնիկ լեզուէն հազիւ գոյգն մնացորդ կայ այսօր. եւ այս զարգացումը կատարուած ու աւարտած է՝ որչափ ալ սկսած ըլլար Հայաստանի շրջանին՝ որուն կը վերաբերէր, նոյնպէս յետ քրիստոնէութեան եւ նաեւ այն ժամանակէն ետքն, անցաւ Աղուանից: Այս իրերը կը շատանանք պարզ ակնարկելով, որովհետեւ մեր նպատակը չի կրնար ըլլալ Հայաստանի սահմանակից աշխարհաց մէջ հայ տարրին պատմութիւնը հիւսել, նիւթ մը սակայն՝ որ արժանի է առանձինն ուսումնասիրութեան: Թողով ուրեմն այս ամէնը՝ ի՞նչ է նոյն իսկ Կիլիկիա, մեր Կիլիկեան Ռուբինեանց շրջանին: Ինչ ալ ըլլան այս աշխարհաց — եւ Գամրականաց — յարաբերութիւնքն հայ ցեղին հետ՝ նախապատմական շրջանին, գոնէ Արամեանեանց օրերէն

ի վեր Հայաստանի հետ ամենին քիչ յարաբերութիւն ունեցող աշխարհ մըն էր, որովհետեւ եւ ո՛չ ուղղակի սահմանակից էր: Տիրարան Մեծ մը անշուշտ նաեւ Կիլիկեան քաղաքներ կ'ամայացընէ՝ իւր Տիրարանակերտի համար. բայց վերջապէս նոյն իսկ հայ դադութիւնը՝ ըստ երեւութիւն՝ ցանցառ եղած պիտի ըլլան այս կողմերը հնութեան ատեն: Եւ քանի որ նաեւ ասի արարական տիրապետութեան ներքեւ ինկաւ՝ Հայոց դադութիւնը շատ ալ սիրուած տեղ մ'ըլլալու չէր: Նկատի առնունք միայն Հ. Ղ. Ալիշանի դժած ժամանակագրական ցանկը<sup>14</sup>, եւ կը տեսնենք՝ որ բաց ի արարական աւանդութենէ մը՝ Հայոց Արարացիներէն վերաշինուած (809ին) Սիս դալու եւ բնակելու մասին (Բելազորի) իրական դադութականութիւնը կը սկսին Ժ. դարուն, այն ժամանակ երբ Գուրգուս կամ Գուրգէն եւ Գէորգ Մլեհ զօրավարները Ռոմանոս կայսեր օրով կըրցան վերջապէս Արարացիներէն խլել Մելիտենէն, եւ այնուհետեւ շարունակուեցաւ նոյն յաջողութեամբ վերատին տիրել նաեւ Կիլիկիոյ: Մանրամասնութեանց մէջ հոս մտնել չենք կրնար: Կը բաւէ զիտել որ Ժ. դարուն վերջն արդէն նշանաւոր թիւ մըն էր հայ դադութականութեան, որով Խաչիկ Ա. եպիսկոպոսներ կը ձեռնադրէր Տարսուսի եւ Սելեւսի համար: Ի հարկէ այս տեղ հայութիւնը վերջնականապէս հոծացաւ միայն ԺԱ. դարու մեծ դադութականութիւններէ ետքը՝ Արծրունեաց ամբողջ ժողովրդով փոխադրուելէն Եփրատէն ասդին, Անուոյ անկմանէ, Կարուց արքային եւն ալ փոխադրուելէ ետքն ի Ծամազաւ: Այս միջոցին հետզհետէ ստեղծուեցաւ միջավայր մը՝ որ Անուոյ Գաղկայ մահուանէ ետքը Ռուբէն մը՝ իր Բարձր բերդով՝ կրնար հիմ դնել Ռուբենեանց հարստութեան (1080ին), եւ յաջող պարագայից շնորհիւ (Խաչակերք եւն) կ'աճի այս ոյժը եւ դար մ'ետքը Լեւոն կրնար պաշտօնապէս իսկ թագ կապել (1196): Կիլիկիա կրնար ընդարձակել իւր սահմանքն ալ, եւ հոն ապաստանած կաթողիկոսութեան հետ՝ ուղղակի շարունակութիւն մ'ըլլալ Բագրատունեաց շրջանէն ետքը հայ ցեղի անկախութեան պատմութեան՝ մինչեւ վերջին արքային մահը (1393ին): Եւ սակայն ի վերջոյ այս պատմութիւնն ընդհանուր հայու-

<sup>14</sup> «Սիսուան», Վենետ. 1885, էջ 550 եւն. հմմտ. ընդհ. պատմականը, էջ 35—67:

թեան մէկ հատածին եւ դարձեալ գաղթականութեան մը պատմութիւն է:

Կարծենք ասի միայն կը բաւէ լիովին հաստատելու ինչ որ ըսինք ազգի մը բուն Հայրենեաց եւ անոր՝ սահմանակից թէ աւելի կամ նուազ հեռաւոր ստեղծած նստեւուն եւ դադութականութեանց մասին: Եւ ասի ի վերջոյ ո՛չ Հայոց յատուկ է, եւ ո՛չ այս կամ այն աշխարհարածնի: Քիչ շատ ամէն ազգ՝ հին ու նոր՝ նոյն երեւոյթներն ունեցած է՝ եւ ի հարկէ: Այսօր իսկ՝ օրինակի համար՝ «Գերմանիա» կամ «Գաղղիա»՝ անհամեմատելի պատմական զարգացմամբ եւ աստիճանաւ իսկ՝ վերջապէս նոյն չեն դերմանախօս եւ դադողիախօս աշխարհաց դուժարութեան հետ, եւ Բեղդիս մը՝ կիսով չափ դադողիախօս դաւառներով, նոյնպիսի մայրաքաղաքով ու պետական լեզուաւ ալ վերջապէս Գաղղիա չէ, եւ Հելլուստիս մը կրնայ դոյութիւն ունենալ դերմանական, դադողիական եւ իտալական մասերով: Իբր ընդհանուր օրինակ յիշուած այս իրերն եւ ո՛չ կրնան այլուստ համեմատուիլ Հայաստանի վիճակին հետ, որուն քաղաքական կեանքը ստիպուած էր առաջին օրէն իսկ տկար ըլլալ: Հայոց — աւելի ճիշդ նախահայ տարերաց — Ուրարտու մտնելն իսկ, եթէ անգամ մը կ'ընդունինք Կիմմերեան արշաւանաց հետ կապ ունենալը — դուրն թաց եղաւ Մարական տիրապետութեան, որուն յաջորդեց Պարսկականը: Եւ այս շրջանին ամէնէն աւելի պիտի կազմուէր հոն նոր հայութիւնը՝ ձուլելով եւ ձուլուելով, սատարապետութեանց շրջանակներու մէջ: Իւր անկախութեան օրերուն ալ միշտ մերձակայ տիեզերակալութեանց ազդեցութեան ներքեւ մնաց, միայն Տիրարանայ կարճատեւ շրջանին ինքնին կըրցաւ աշխարհակալութեան ձեռնարկել, այնուհետեւ մնալով Հռոմայեցոց եւ Պարթեւ-Պարսից միջեւ խաղալիկ մը՝ մինչեւ որ խաղաղիկ բաժնեցին իրենց մէջ: Աւելի կարելի չէ համեմատել Փոքր-Հայք՝ որ երեւան կու գայ պատմութեան մէջ իբր «կուսակալութիւն» մը, դարու մը չափ անկախութիւն մը կ'ունենայ եւ կը կլլուի լիովին Պոնտոսէ, յետոյ իբր հոռմէական՝ իբր դար մ'ալ մանրապետութիւն կ'ըլլայ, վերջնականապէս մնալու համար այնուհետեւ դարերով նահանգ Հռոմայեցոց եւ Բիւզանդեանց, մինչեւ որ ԺԱ. դարու վերջերը յաջորդեցին Սելճուկեանք, միայն այս ԺԱ. դարու սկիզբը կրելով այնչափ փոփոխութիւն մը որ Արծրունեաց աւանդ՝ իւր ժողովրդով

ալ կու գայ հաստատուելու հոն՝ ինչպէս շրջակայքը, Բիւզանդեան պաշտպանութեան ապաւինելով՝ Սելճուկներու երկիւղէն: Արդեօք մտածեցին երբեք Հայք թէ այս դանդաւարին դադութականութեամբ դէպ ի արեւմուտք՝ Եփրատէն մինչեւ իսկ Բիւզանդիոն՝ թէ իրենք վերադարձ մը կը կատարեն այն երկիրներն, ուսկից — եթէ կ'ընդունուի անգամ մը Հայոց դոնէ կարեւոր մէկ տարրին թրակեան-փոխակալան ըլլալը — իրենց նախահայրերը՝ հակառակ շարժմամբ՝ դիմած էին դէպ ի արեւելք, դէպ ի Եփրատ, եւ Եփրատէն անդին՝ հին Ուրարտուի շրջանակին մէջ կազմած իրենց Հայաստանը:

(Շարունակելի): Զ. Յ. ՏԱՇԵԱՆ

**ԲՋՆՈՒՆԵՆՑ ԺՈՎԻ ԿՂՋԻՆԵՐՈՒ ԵՆ ԵՊԱՏՆԵՐՆ ՈՒ ՎԵՆՔԵՐԸ\***

Բ.

**ԿՏՈՒՅ ԵՆ ԵՊԱՏ**

1. ԿՏՈՒՅ ԿՂՋԻՆ

Բնունեաց ծովի երկրորդ կղզին է Կտուց, որ Լիմէն շատ պղտիկ է եւ ունի մէկուկէս վերստ երկայնութիւն եւ կէս վերստ լայնութիւն: Վան քաղաքէն չորս ժամ հեռու է: Կը գտնուի Վանի արեւմտեան-հիւսիսային կողմը, Ամենաշատի դիմաց: Երբեմն իբրեւ թէ շարունակութիւնն եղած իր հանդէպ գտնուող թերակղզիին, իսկ այժմ բոլորովին բաժնուած ջրանցքով մը, որ երկու երեք մարդաչափ խորութիւն ունի (Արձագանք, 1882, էջ 313): Կը կարծուի թէ կղզիին ցամաքէն այս բաժանումը տեղի ունեցած ըլլալու է 1810ին, որ սակայն սխալ է, վասն զի Վանայ ժամանակագրութիւնը կը գրէ «Յամի Ռձիֆ» (1713) նորոգեցաւ Կտուց ԾՈՎԱՊԱՏ անապատն Ս. Կարապետու սրբատաշ վիմօք» (Հանդ. Ամս., 1888, էջ 196 հմմտ. եւ վարը):

Կտուց նման է Աղթամարի: Ապառաժուտ՝ սակայն «բաւականին հարթ տարածութեան վրայ ունի հարթավայրեր, որոնց մի մասում, որպէս վարելահողերի, ցանում են հացահատիկներ եւ այլ հունտեր եւ մի

մասումն են խնամքով պատրաստուած մեծ եւ փոքր պարտէզներ, բանջարանոցներ, որթատունկ բարունակներ՝ յատկացուած այս եւ այն վարդապետի եւ մոնթի որպէս իրանց աշխատութեան արդիւնքն» (Շէրենց, Սրբավայրեր, էջ 72): Կտուցի մէջ եւս կը գտնուին մեծ թուով նշենիներ:

Հաւանօրէն կղզիս իր անունը կը պարտի Կտուցի նման ունեցող իր արտաքին ձեւին ու տեսքին, թէեւ բարեպաշտիկ աւանդութիւնը անոր անուանակոչութիւնը դէպքի մը կապած է, ինչպէս պիտի տեսնուի քիչ վերջ:

2. ԿՏՈՒՅ ԱՆԱՊԱՏԻ ՆԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Կտուց կղզիին վրայ կը գտնուի համանուն անապատը, — եկեղեցոյն անունով կոչուած նմանապէս Ս. Կարապետի անապատ կամ վանք — որ երկար դարեր դիմանալով հասած էր մինչեւ մեր օրերը, թէպէտ յաճախ արտաքին ու ներքին փոթորիկներ ուղեր են անոր կամարները խորտակել:

Կտուց անապատը բաղկացած է տաճարէ մը, դաւիթէ մը, դարպասէ մը եւ բազմաթիւ մութ ու խաւարչաին սենեակներէ եւ «Իրսի տուն» ըսուածէն, որ լճին հարաւային ափին (կղզիին դիմացը) կը գտնուի:

Տաճարը, ուր կը պահուին Ս. Կարապետի մասունքներէն (Սարգիսեան, Տեղագրութիւն, էջ 278) անուանուած է Ս. Կարապետ, նաեւ Ս. Խաչ, ինչպէս ձեռագիրներու յիշատակարանները կը հաւատեն: Սեղանը նուիրուած է Աստուածամօր, իսկ աջակողմեան խորանը Ս. Կարապետի եւ ձախակողմեանը Ս. Ստեփանոս Նախալկայի: Տաճարը քառանկիւն է եւ ունի երկու՝ ամբողջական ու վեց՝ կիսասիւններ, որոնց վրայ կը բոլորուին պայտածեւ կամարներ՝ իրենց վրայ կրելով ութանկիւնի զմբէթը, որ կոնաձեւ կաթողիկէով պսակուած է: Արձանագրութիւն մը կը պատմէ՝ «Յիշեցէք Բաղչէցի վարպետ զմահտեսի անարժան Խոջաթարն, եկն ի սուրբ անապատն շինեց զեկեղեցին գումբէթով, բնաւ հախ շառաւ, բաշխեաց սուրբ Կարապետու յիշատակ իւր հոգւոյն եւ ծնողացն Յովանիսին, Զմբութին, Մընուկին եւ Սահակին թվ. Ռձիֆ» (1713)<sup>1</sup>:

Տաճարին սիւները քառակուսի են, պարզ եւ առանց խարխախի: Խոյակներն անպաճոյճ:

<sup>1</sup> Այլ թուականէն է եւ այս արձանագրութիւնը «Բաղչէցի Մարգաէ Խոջաթարն զկազմողս յիշեցէք Բիւստոս Ռձիֆ» (Ազգր. Հանդ., 1911, էջ 94):

\* Լիմ անապատի մասին արդէն խօսուած է հմմտ. Հանդ. Ամսօրեայ, 1938, էջ 347—375: